# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.33-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

/Քննության է ընդունվել ՍԴ թիվ 1 դատական կազմի 28.06.2011թ. ՍԴԴԿՈ/1-15 որոշմամբ/

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Քաղաքացիներ Ս. Հակոբյանի եւ Գ. Կիրակոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը եւ ՍԴ-ի կողմից քննության ընդունված՝ «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի, Սերինե Փլջյանի, Իրինա Օզանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների, Սվետա Հարությունյանի եւ «Մելփեքս» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի, 204.38-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի՝ միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

2. Նկատի ունենալով, որ վերոնշյալ միավորված գործին միավորվել է նոր քննության ընդունված գործ՝ «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի, Սերինե Փլջյանի, Իրինա Օզանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների, Սվետա Հարությունյանի, Սերգեյ Հակոբյանի եւ Գայանե Կիրակոսյանի ու «Մելփեքս» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի, 204.38-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսել 2011 թվականի հուլիսի 15-ին, ժամը 9.30-ին, այդ կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. մայիսի 20-ի ՍԴԱՈ-39 աշխատակարգային որոշումը եւ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ միավորված գործով զեկուցողներ նշանակել սահմանադրական դատարանի անդամներ Ա. Պետրոսյանին եւ Ա. Խաչատրյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա միավորված գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 հուլիսի 2011 թվականի
ՍԴԱՈ -56